
ԿՐԿԻՆ ՀՅՈՒՄԻԱՍՅԻՆ ԳՈՒԳԱՐՔԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ՀԱՄԼԵՏ ԴԱՎԹՅԱՆ

Հայտնի է, որ «Սումխեթ» կամ «Սումխիթ» աշխարհագրական անունը հաճախ է տարրնթերցումների ենթարկվում: Իսկ ընդհանուր առմամբ հարցը, որն արդեն գրեթե տեսական առանձին դրույթի է վերածվել, շուրջ հարյուր տարվա պատմություն ունի, որի հիմնադիրն է Բ. Ջավախիշվիլին¹: Ընդ որում, վրացի վրացագետների կողմից դեռևս մի քանի տասնամյակ առաջ դրան այնպիսի մի թափ հաղորդվեց, որ մի պահ հայ ուսումնասիրողները ստիպված սկսեցին զսպվածության կոչեր անել: «Որոշ հեղինակավոր պատմաբաններ, – գրում է Պ. Սուրադյանը, – դեռ այսօր էլ վիճում են, թե ի՞նչ պետք է հասկանալ «Սումխիթ» անվան տակ. Սումխիթ=Հայաստան, թե՞ Սումխիթ=Հարավային Վրաստան: ...Սումխիթը մի գավառ էր, ուր հավասարապես և հայեր էին ապրում, և վրացիներ՝ ամեննին էլ առանց վիճելու, թե ով ում հողում է ապրում: Հայ-վրացական պատմական-մշակութային փոխհարաբերությունները քննելիս որևէ մեկի մերժելու կամ արհեստականորեն «միատարրացնելու» ցանկությունը վտանգավոր է և ոչ պատմական. հայագիտությունն ու վրացագիտությունը նման հարցադրումից չեն շահի: ...Մենք խուսափում ենք ավելի վճռական արտահայտվելուց»²: Այս բարեկիրթ պահվածքը, սակայն, երբեք ողջունի չարժանացավ վրացի գիտնականների կողմից: Եվ չէր էլ կարող արժանանալ, «որովհետև ներքին հավակնություն կա Քարթլի համարելու Լոռին, Տաշիրը և այլն, ապա եթե այն կոչվում է դարձյալ Սումխիթի, ապա այդ Սումխիթին ոչ մի դեպքում չպետք է համարել Հայաստան»³, քանզի Սումխիթի վրացիները կոչել են իրենց երկրի այն մասը, որ հայերը նվաճել են նրանցից և մտցրել իրենց թագավորության մեջ⁴:

Վրաց գիտնականների պատկերացումները ներկայացնում ենք ըստ Խ. Թորոսյանի նշված հիմնարար աշխատության: Խնդրո վերաբերյալ նա նաև առանձին ուսումնասիրություն ունի⁵: Նկատենք, որ, ըստ էության, սույն հետազոտություններով հարցը կարելի է փակված համարել, մերժել ու դատապարտել շահարկման ցանկացած փորձ, որովհետև Խ. Թորոսյանը քննել,

¹ Տե՛ս Բ. Ջավախիշվիլի. Վրաստանի սահմանները, Թբիլիսի, 1919 (վրացերեն):

² Վրաց ժամանակագրություն (1207–1318), թարգմ., առաջաբ. և ծանոթ. Պ. Սուրադյանի, Երևան, 1971, էջ 31–32:

³ Խ. Թորոսյան. «Թագակիրների պատմությունն ու գովարանությունը» որպես Ջաքարյան Հայաստանի ու Ջաքարյանների պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1992, էջ 137:

⁴ Նույն տեղում, էջ 118:

⁵ Տե՛ս X. Т о р о с я н. Топоним «Сомхити» в грузинских первоисточниках. Ереван, 2003.

համեմատել, բաղադրատեղի ու վերլուծության է ենթարկել վրացական անխտիր բոլոր սկզբնաղբյուրները: Ուրիշ մեկը նման աշխատանք չի կատարել, ուրեմն՝ հարկ է խաղաղվել և հարգել պատմական ճշմարտությունները: Ասվածն ամրապնդելու համար մի քանի քաղվածք ներկայացնենք նրա առաջին գրքից, որը կօգնի նաև մեր ասելիքը ճիշտ ընկալելուն: «Վրացագիտության մեջ գոյություն ունեցող տեսակետի համաձայն, – գրում է Խ. Թորոսյանը, – դրանք (Սումխեթի և Սումխիթի բառերը. – Ն. Դ.) միննույն բովանդակությունն ունեցող, աշխարհագրական նույն տարածքը արտահայտող հասկացություններ չեն, միննույն տեղանվան գրության (կամ արտասանության) տարբեր ձևեր չեն, այլ բոլորովին տարբեր տեղանուններ: Մեկը՝ «Սումխեթի»-ն, նշանակում է Հայաստանը, մյուսը՝ «Սումխիթի»-ն, Հայաստանից բացի նշանակում է նաև Վրաստան, վերջինիս այն մասը, որ կոչվում է «Ստորին Քարթլի» (Քվեևո Քարթլի): ...Տարիների ընթացքում ծանոթանալով վրաց մատենագրությանը, տեսանք, որ «Սումխեթի» և «Սումխիթի» բառերի վերոհիշյալ տարբերակումը համեմայն դեպս մինչև XV դ. համար, արհեստական է, չունի աղբյուրագիտական հիմք, որը պարզեցինք նաև բազմաթիվ առանձին երկերի հատուկ քննությամբ»⁶: «Բ. Ջավախիշվիլին իր տեսությունը փաստարկում է ընդհանուր դատողություններով: Նա իր դրույթը չի հիմնավորում վրաց մատենագրության, մասնավորապես, պատմագրության հուշարձանների այն հատվածների կոնկրետ վերլուծությամբ, որոնց մեջ վկայված է «Սումխիթի» բառը: Այդպիսի աշխատանք, «Սումխիթի» բառի բովանդակությունը պարզելու համար, վրացագիտության մեջ չի կատարված: Վրացագետները հետազայում կրկնել են հիմնական միտքը, այն, որ իբր «Սումխիթի» նշանակում է Վրաստան՝ Ստորին Քարթլի: Եվ դրանով անվերապահ ճշմարտության արժեք է ստացել մի դրույթ, որը շատ հեռու է ճշմարտությունից»⁷: «Այսպիսով, «Սումխեթի» և «Սումխիթի» նույն բառն է, նույն բառի երկու տարբերակը: Քանի որ ստույգ է, անվիճելի, հաստատ, որ «Սումխեթի» նշանակում է Հայաստան, ապա դրա տարբերակ «Սումխիթի»-ն էլ պետք է արտահայտի Հայաստանի մի տարբերակ: Որքան էլ դրանք արտահայտեն տարբեր հասկացություններ, դա կարող է լինել միայն ծավալի մեջ և ոչ էության: Մեկը կարող է արտահայտել ավելի մեծ տարածք, մյուսը՝ փոքր, բայց երկու դեպքում էլ Հայաստան: Չի կարող, անհեթեթություն է մտածել, որ Հայաստան նշանակող բառը մի դեպքում նշանակի Հայաստան, մի այլ դեպքում Վրաստան: Հայաստանի ինչ-որ մասը կարող էր լինել Վրաստանի կազմում (և եղել է), քաղաքականապես դա Վրաստան է: Բայց էթնո-տարածքային իմաստով դա այնուամենայնիվ Հայաստան է: Դա գիտակցվում է, գիտակցում է նաև Վախուշտին, ուստի իր ժամանակ քաղաքականապես Վրաստանի մաս հանդիսացող այդ տարածքը այնուամենայնիվ կոչում է Սումխիթի-Հայաստան, որովհետև էթնո-տարածքային իմաստով դա Հայաստան է և ոչ Վրաստան: Ճիշտ այնպես, ինչպես որ այժմ քաղաքականապես Վրաստան է թե Հարավային Օսեթիան, թե Աբխազիան,

⁶ Խ. Թորոսյան. նշվ. աշխ., էջ 116–117:

⁷ Նույն տեղում, էջ 123:

բայց էթնո-տարածքային իմաստով Վրաստան չէ ոչ մեկը, ոչ մյուսը⁸: «Քննված են վրաց պատմագրության բոլոր գործերը սկզբից մինչև 13-րդ դ.: Իմ նպատակն էր պարզել, թե ինչ են հասկացել վրաց պատմագիրները «Սոմխեթի» և «Սոմխիթի» տակ: ...Բոլոր այդ գործերում չկա «Քվեմո Քարթլի» (Ստորին Քարթլի) բառ, արտահայտություն: Վրաց պատմագիրները, իսկ նրանք հենց Քարթլի պատմությունը գրողներն են, ոչ մի գաղափար չունեն այն մասին, որ իրենց հայրենիքի ինչ-որ մասը կոչվում է «Ստորին Քարթլի»: Եվ քանի որ չի եղել «Ստորին Քարթլի» երևույթը, ուստի չի կարող լինել նաև որևէ բառ այն արտահայտելու համար: Հետևապես «Սոմխիթի»-ն չէր կարող նշանակել «Ստորին Քարթլի»⁹:

Մեր կողմից ավելացնենք, որ վրաց հայտնի պատմաբան Մ. Ջանաշվիլին, թվարկելով «սուրբ Նինոյի Վրաստան մուտքի ժամանակ Վրաստանի ունեցած նահանգները», առանձին նշում է Սոմխիթը և առանձին՝ Քարթլին¹⁰: Ջուանշերի երկի բուսերեն ակադեմիական հրատարակության թարգմանիչ և ծանոթագրող Գ. Ծուլախան նույնպես մատենագրի 12 անգամ հիշատակած Սոմխիթին նույնացնում է Հայաստանի հետ¹¹:

Սա՝ ընդհանուր Սոմխեթ-Սոմխիթի մասին: Բայց ահա դրանից բխող ոչ պակաս կարևոր մեկ ուրիշ հարց էլ կա. իսկ ի՞նչ են հուշում երկրամասի բնակավայրերի անունները: Այս առումով Պ. Մուրադյանի ակնհայտորեն փոխզիջումային բնույթ ունեցող վերոբերյալ տեսակետը, թե «Սոմխիթը մի գավառ էր, ուր հավասարապես և հայեր էին ապրում, և վրացիներ՝ ամենին էլ առանց վիճելու, թե ով ում հողում է ապրում», չի հաստատվում տեղի տեղանվանաբանության (տոպոնիմիայի) ուսումնասիրությանը: Լոռիում տարածված է -ուտ վերջավորությամբ տեղանունը (Արջուտ, Աճարկուտ, Ուռուտ, Թեղուտ, Լորուտ, Շամուտ, Դեղձնուտ, Մամխուտ, Կառնուտ, Կեչևուտ, Կաճաճկուտ, Կնձռուտ՝ Մառնուլի հին անվանումը): Ըստ Գ. Ջահուկյանի՝ -ուտ տեղանվանական կազմիչը հնդեվրոպական ծագում ունի¹²: Մնում է հիշել, որ հայերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին, վրացերենը՝ իբերոկովկասյան: Այսինքն՝ տարբեր լեզվաընտանիքներ, լեզվական տարբեր կանոններ: Ա. Շանիձեն գրում է, որ վրացերենում աշխարհագրական անունները սովորաբար կազմվում են բառի հիմքին ավելացնելով -եթ վերջածանցը (Օրբ-եթ-ի, Քոր-եթ-ի, Բի-եթ-ի)¹³: Ըստ այդմ, առանց այլևայլության կարելի է նշել, որ Հայաստանի Հանրապետության սահմաններում գտնվող «բուն վրացական» Լոռի-Տաշիրում գտնվող մեկ վրացական անունով բնակավայր չկա և չի եղել, մինչդեռ Վրաստանի Հանրապետության տարածքում, հասկապես, հարավային սահմաններից մինչև նրա Մցխեթ վաղեմի

⁸ Նույն տեղում, էջ 160:

⁹ Նույն տեղում, էջ 161-162:

¹⁰ Տե՛ս Մ. Դ Ջ ա ն ա շ վ ի լ ի. История грузинской церкви, кн. I, Обращение картвельцев. Тифлис, 1898, с. 22-23.

¹¹ Տե՛ս Դ. Դ Ջ ա ն թ եր ա ն ի. Жизнь Вахтанга Горгасала, пер., введ. и примеч. Г. Пулая. Тбилиси, 1986, с. 145.

¹² Գ. Ջ ա հ ու լ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 415:

¹³ Տե՛ս Խ. Թ ո թ ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 159:

մայրաքաղաքն ընկած հատվածում (իմա՝ Հյուսիսային Գուգարք), տասնյակ բնակավայրեր կան, որոնց անվան նախնական ձևը հայկական է: Նույն Պ. Մուրադյանը հանիրավի մոռացության տրված մի հրապարակում ունի, որտեղ նա լեզվաբանության ընձեռած հնարավորություններով պատմության հնագույն շերտեր է վերհանում¹⁴: «Լեզվաբանական աշխարհագրության շնորհիվ հնարավոր է դառնում քննության առնել որոշ գավառների պատմական ճակատագրի ու էթնիկական կազմի խնդիրը»¹⁵, – գրում է ճանաչված վրացագետը: Նրա առաջարկած բանալին հետևյալն է. տեղանուններում իբրև ուղղական հանդես եկող հայցական հոլովածներ բնորոշ է միայն հայոց լեզվին (օրինակ՝ Ագուլիք-Ագուլիս, Գորիք-Գորիս, Մասիք-Մասիս, Ուխթիք-Ուխթիս//Ոխթիս, Ուրբանիք-Ուրբանիս, Մանգղիք-Մանգղիս): Վրաստանում զգալի թվով տեղանուններ կան, որոնք նույն ձևն ունեն, ինչ հայերենի հայցական հոլովով վերջավորությամբ անունները: Հայերեն նի-ա/լի-ա/րի-ա վերջավորության վրացերեն իս-ի տարբերակով տեղանուններից են Փագիսի, Խերթվիսի, Ռուիսի, Մանգլիսի, Առանի սի, Բոլնիսի, Դմանիսի, Պանկիսի, Քութաթթիսի և այլն: Նույնպիսի ձևափոխության արդյունք է նաև Թբիլիսի անունը. այն առաջացել է հայկական Տփղիք/Տփղիս բնակավայրի անունից: Կասկածի ենթակա չէ Պ. Մուրադյանի տեսակետը, ըստ որի՝ «Հայ և վրաց գրչության ու ազգային գրականության ստեղծումից էլ շատ առաջ, Գորգասալի կողմից աթոռանիստ քաղաք հիմնելուց էլ շատ առաջ նույն տեղում սկզբնապես Տփղիք անվանումով բնակավայր է եղել: Սակայն դպրության շրջանում այն արդեն Տփղիս ձևն ուներ»¹⁶: Պատահական չէր, ուրեմն, որ մինչև խորհրդայնացումը հայերը գրավոր խոսքում նախընտրում էին Տփղիս, իսկ բանավորում՝ Թիֆլիս ձևերը:

Անշուշտ, սպասելի էր, որ վրացի պատմաբաններն ամենևին ոչ եղբայրական խանդաղատանքով կընդունեն Պ. Մուրադյանի տեսակետը, չնայած, որ այն վիճելի համարվող բազմաթիվ հարցեր է պարզաբանում: Եվ ահա իր ժամանակին նրանց հրապարակած հապճեպ պատասխանից իմանում ենք, որ «Tbilisi (Тбилиси) տեղանունը թափանցիկ և համոզիչ վրացական ստուգաբանություն ունի»¹⁷: Այնուհետև՝ նույն հանգերգով: Սույն հուզառատ ընդդիմախոսողները «թափանցիկ և համոզիչ» տեղանվան ներկայիս ձևն իրավացիորեն բխեցնում են վրացերեն թբիլի (հայերեն՝ տաք) բառից, ընդգծելով, որ դա բացատրվում է նրա տարածքում հանրային տաք ջրերի գոյությամբ: Ինչ վերաբերում է քաղաքի անվան Թիֆլիս նախկին ձևին, ապա այն պարզապես կառուցվել էր թբիլի բառարմատի հունա-արաբա-պարսկա-թուրքա-ռուսական աղավաղված տարբերակի վրա: Թվում է՝ ամեն ինչ համոզիչ է ու վերջնական: Այդ դեպքում, սակայն, ինչո՞ւ են հողվածագիրները խուսափում հայերեն

¹⁴ Տե՛ս Ս. М у р а д я н. Винительные формы в именительном по данным топонимики Армении. – «Вестник общественных наук» АН АрмССР, 1971, ¹ 4, с. 21–38.

¹⁵ Նույն տեղում, էջ 38:

¹⁶ Նույն տեղում, էջ 36:

¹⁷ А. О н и а н и, З. С а р д ж в е л а д з е. Против извращения вопросов грузинской топонимики. – «Мацне», серия языка и литературы. Тбилиси, 1971, ¹ 3, с. 37–41.

Տփղիս ձևը հիշատակելուց: Չէ՞ որ, եթե դա էլ համարենք Թիֆլիս-ի մի աղավաղում, ապա հարցն ինքնրստինքյան կգտնի իր պատասխանը: Ըստ այդմ, ինչո՞ւ են նրանք Տփղիս-ը «մոռանում», եթե պահը հարմար է ասպարեզ հանելու հայ պատմաբանի աճպարարությունները...

Փորձենք ինքներս առաջ գնալ և պարզել, թե ի՞նչ է այդ Տփղիս-ը, արդյոք հայերեն ինչ-որ բան նշանակո՞ւմ է, թե՞ բաղաձայնների անհեթեթ կուտակում է: Անշուշտ, պատասխանը գտնելու համար առաջին հերթին պիտի կարողանանք հասկանալ նրա կառուցվածքն ու իմաստը (ի վերջո, տեղանունը նախևառաջ տեղեկություն է տվյալ տեղի ու տարածքի մասին): Հետևաբար, կրկին հիշենք, որ քաղաքը գտնվում է տաք վայրում, այնուհետև՝ հայերեն տաք, ջերմ բառերի համարժեքն է տապ բառը: Աճառյանը համարում է, որ վրացերեն տփիլի (թփիլի) – տաք բառը պատահական նմանություն ունի (մի՞թե պատահական) հայերեն տապ բառի հետ¹⁸: Ըստ այդմ, եթե նույն այս բառի տապ-տապ-տփի հնչյունափոխված ձևը մեզ թույլ է տալիս ստուգաբանել Տփղիս-ի առաջին բաղադրիչը, ապա ի՞նչ անենք նրա -ղիս կամ -ղիք վերջնամասի հետ: Հասկանալի է, որ այն ածանց չէ (հայերենում նման ձևույթ չկա), նշանակում է՝ լիարժեք բառ է: Բայց ի՞նչ բառ է, տեղանքն ի՞նչ է հուշում: Այս պարագայում վրացերենը մեզ օգնական չէ, որովհետև թերի է, կիսատ է, ընդամենը ասում է՝ տաք գոմարած իրենց պնդած is-i վերջածանցը¹⁹: Հայերեն տապն էլ է տաք, ուրեմն՝ տաք, բայց ի՞նչ՝ օ՞ղ, ջո՞ղ, հո՞ղ: Հայերեն ո՞ր բառն է սրանցից մեկնումեկին փոխարինում, ընդամենը -ղիս կամ -ղիք պարունակում (ավելի շուտ -ղիք, որովհետև Պ. Մուրադյանը համոզում է, որ դա է նախաձևը): Պարզվում է՝ կա այդպիսի բառ: Ահա այն՝ աղիք: Այստեղ ոչ մի հորինվածք չկա՝ Հրաչյա Աճառյանն է բացատրում. աղի(ք) հայերեն նշանակում է նաև ընդեր(ք)²⁰: Սրանով ամեն ինչ իր տեղն է ընկնում. տապ + աղիք = Տապաղիք՝ բնիկ հայերեն իմաստ արտահայտող տեղանուն: Շատ հավանական է, որ Տփղիսի հնագույն, անդրենաձին ձևը հենց Տապաղիք է եղել, այնպես, ինչպես ունեցել ենք Դարանաղի(ք), Մարդաղի(ք), Մանանաղի(ք) գավառանուններ: Ժամանակի ընթացքում, գուցեև օտար ազդեցությամբ, բառը ճապաղվել է, գռեհկացվել (չնայած՝ հայերենի կանոնների համաձայն), կրել հետևյալ ձևափոխությունը. Տապաղիք-Տպղիք-Տփղիք-Տփղիս (ա ձայնավորները սղվել են, պ բաղաձայնը հնչյունափոխվել է փ-ի): Այսպիսով՝ Տփղիս նշանակում է տաք ընդերք: Պարզ, կոնկրետ և հասկանալի: Մա նշանակում է նաև, որ վրացերեն անորոշ ու կիսատ Թփիլի-սին (տաք՝ ի՞նչ) ավելի ուշ շրջանի նմանեցում է հայերեն Տփղիս-ին:

Պ. Մուրադյանը, ահա, նկատի ունի նախաթիֆլիսյան այս բնակավայրը, որը եղել է հայկական, իսկ անունը՝ Տփղիս²¹: Հայ վրացագետի դիտարկումներն

¹⁸ Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան, 1979, էջ 372:

¹⁹ Տե՛ս Գրուզինսկայա ССР, энциклопедия. Тбилиси, 1981, с. 318.

²⁰ Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. I, Երևան, 1971, էջ 128:

²¹ Տեղանունները ձեռնտու տարբերակով ստուգաբանելու, իրականում՝ յուրացնելու վարպետ են նաև թուրքերը: Սրանք, օրինակ, Աղթամար կղզու անունը թուրքերեն Թարգմանում են Ակ դամար, իբր՝ Սպիտակ երակ, և վատ չեն զգում, որ դրանից անհեթեթություն է ստացվում: Կարևորը, որ հայերեն չէ:

ամբողջովին տրամաբանական են և ամեննին ապրիորի, տեսական հարցադրումներ չեն: Անհրաժեշտ է պարզապես խնդիրը տեսնել այն նույն չափումներում, նույն ժամանակաշրջանում ու տարածաշրջանում, որն առաջարկում է հեղինակը: Ինչ վերաբերում է նրան, թե որն է վրացական պատմագիտական շրջանների մտահոգության բուն պատճառը, ապա հենց իրենք էլ ակամայից խոստովանում են դա, երբ գրում են՝ «եթե մի լեզվի ազդեցության տարածքում բացահայտվել է այլալեզու տեղանունների համակարգ (և ոչ թե առանձին անուններ), ապա դա լուրջ վկայություն է վաղ ժամանակներից սլյալ տարածքում ուրիշ լեզվով խոսող մեկ այլ ժողովրդի բնակության մասին»²²:

Ավելացնենք, որ սա ոչ միայն ճիշտ միտք է ընդհանրապես, այլև լույս է սփռում հեռավոր ժամանակների վրա, ակամայից ճշգրիտ բացահայտում անցյալում տիրող իրավիճակը: Այո, իսկապես, մինչև Կուր գետն ընկած տարածքում հայկական տեղանունների մի ամբողջ համակարգ է եղել, որն աստիճանաբար քայքայվել և օտարվել է:

ЕЩЕ РАЗ К ВОПРОСУ О ТОПОНИМИКЕ СЕВЕРНОГО ГУГАРКА

ГАМЛЕТ ДАВТЯН

Р е з ю м е

Как известно, географические названия Сомхет или Сомхит часто подвергаются разночтениям. Особый интерес возникает при изучении названий поселений. В регионе Лори самое распространенное название оканчивается на *nlun* (ут), которое имеет индоевропейское происхождение. Известно, что армянский язык принадлежит к семейству индоевропейских языков, а грузинский – к иберо-кавказским. Таким образом, мы имеем дело с разными языковыми семействами, которые отличаются разными языковыми правилами.

А. Шанидзе пишет о том, что в грузинском языке географические названия составляются при помощи прибавления к основе слова суффикса *tr̥* (er). Таким образом, бесспорно можно отметить то, что на сегодняшней территории Республики Армения в Лори-Ташире нет и никогда не было ни одного поселения с грузинским наименованием. Тогда как десятки поселений, находившихся на территории Республики Грузия, начиная с южных границ и кончая древней столицей Мцхети, имеют первичные армянские наименования. Результатом изменения является и само название Тбилиси. Оно возникло от названия армянского поселения *Tp̥gik*//*Tp̥gis*. Вероятнее всего, в прошлом название *S̥p̥n̥hu* (*Tp̥gis*) звучало по-другому: *uṣuṣuṣp̥*՝*uṣuṣuṣp̥* (*Tapaṣik* *tap*+*agik*). Это название имеет исконно армянское происхождение, которое образовалось от корней *uṣuṣu*=*uṣuṣ*(*tap*–*жара*) и *uṣp̥*=*ընդերք* (*agik*– *недра*). С

²² А. Ониани, З. Сарджвеладзе. *Նշվ. աշխ., էջ 41*:

течением времени слово видоизменяется и грубеет. Таким образом, Тпгис означает горячие недра. Это означает, что по-грузински слово Тбилиси и есть уподобление армянского Тпгиса. Очевидно, что в древние времена на территории, растянувшейся до реки Куры, была большая система армянских наименований, которая в свою очередь постепенно развалилась и была отчуждена.

ONCE MORE ON THE ISSUE OF TOPONYMY
OF NOTHERN GUGARK

HAMLET DAVTYAN

S u m m a r y

As is known the geographical names of Somkhet or Somkhitis often submitted to different understanding. In this sense the names of territory settlements are more interesting. The toponymic name with **-ut** ending is widespread in Lori, which has an Indo-European origin. It is also known that Armenian belongs to Indo-European family of languages, Georgian belongs to Ibero-Caucasian. So these are different families of languages with different lingual rules. A. Shanidze has written that in Georgian language the geographical names are usually formed by adding **-et** suffix to the basis of the word. According to that, unquestioningly, it can be mentioned that in Lori-Tashir “main Georgian place” which is in the borders of the Republic of Armenia there isn’t at least one settlement with Georgian name and there hasn’t been. But in the territory of the Republic of Georgia especially from the southern borders up to its ancient capital Mtskhet (now Northern Gugark) there are dozens of settlements the preliminary names of which are Armenian. The result of modification is also the name of Tbilisi – it origins from Armenian settlement name Трkhik//Трkhis. Probably the ancient, initial form of Трkhis has been Tapakhik (*տաք*(hot) + *աղիք* (lithosphere)). In the course of time the word changes and grows rude. It also means that Tbilisi in Georgian is like Armenian Трkhis. So it is evident that in ancient times there has been a whole system of Armenian settlement names in the territory of the river Kur, which was gradually decomposed and banished.